ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Գիտահետազոտական և ուսումնաարտադրական փորձառությունների նկարագիրը լրացնելու

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Գիտահետազոտական և ուսումնաարտադրական փորձառությունների նկարագրերը ոչ թե փորձառության գնահատման առանձին բաղադրիչ են, այլ *նախապայման,* որի առկայության դեպքում միայն կարող է կազմակերպվել ուսանողի փորձառության հաշվետվության պաշտպանությունը:

1

«Արդյունքները» բաժնում ուսանողին անհրաժեշտ է 2-3 նախադասությամբ ներկայացնել տվյալ շաբաթվա ընթացքում փորձառության վայրում իրականացրած հիմնական աշխատանքները, հանձնարարականները և այլն:

2

«Պարբերականությունը» բաժնում ուսանողին անհրաժեշտ է ներկայացնել տվյալ շաբաթվա ընթացքում քանի անգամ է այցելել փորձառության վայր կամ կապ հաստատել փորձառության վայրի ղեկավարի հետ:

3

Այնուհետև ուսանողին անհրաժեշտ է տպել փորձառության նկարագրի բոլոր էջերը և ներկայացնել փորձառության վայրի ղեկավարին՝ ստորագրության (բացառությամբ հեռավար փորձառության դեպքերի, երբ փորձառության վայրի ղեկավարը հրաժարվում է հանդիպել ուսանողին հետ, ինչի մասին անհրաժեշտ է տեղեկացնել ամբիոնի ղեկավարին):

4

Փորձառության վայրի և ամբիոնի ղեկավարներն, ըստ անհրաժեշտության, 2-3 նախադասությամբ կարող են ներկայացնել իրենց դիտարկումները, կարծիքներն ու դիտողությունները ուսանողին՝ փորձառության նկարագրի վերջին էջում (ուսանողը կարող է նրանց ներկայացնել արդեն տպված մեկ էջը՝ նշումների համար):